Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագիր (ՈՀԱԾ)

Պայմանագրի Շնորհման Ծանուցում

(Խորհրդատվական ծառայություններ – Ընկերությունների ընտրություն)

Պայմանագիր.	- **"Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնման/կառուցման տեխնիկական վերահսկողություն" ISMP/CQS/SW–21/004**
Պայմանագիրը շնորհված ընկերություն.	- **«Ջինջ» ՍՊԸ**
Հասցե.	- **ՀՀ, ք.Երևան 0037, Զոլակյան փող. 38**
Պայմանագրի ստորագրման ամսաթիվ.	- **2022թ. սեպտեմբերի 28**
Գնման/ընտրության մեթոդը.	- **Խորհրդատուների որակի վրա հիմնված ընտրության (CQS)**
Պայմանագրի արժեք.	- **119,997,600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**
Ծառայությունների տևողություն.	- **17 (տասնյոթ) ամիս շինարարական աշխատանքների մեկնարկից հետո**

Պայմանագրի շրջանակներ.

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») նպատակն է՝ իրականացնել 13 միջտնտեսային (երկրորդ կարգի ջրանցքներ) և 2 համայնքներում՝ ներտնտեսային համակարգերի (երրորդ կարգի ջրանցքներ) վերականգնման շինարարության տեխնիկական հսկողություն և որակի վերահսկում: Վերականգնվելու/կառուցվելու են 6 ջրօգտագործումների ընկերությունների (ՋՕԸ-ներ) սպասարկման տարածքում գտնվող միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման համակարգերի հատվածները՝ մոտ 46.84 կմ ընդհանուր երկարությամբ:

Խորհրդատուն պատասխանատու է նաև ապահովելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական երաշխիքային քաղաքականություններին, ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակներին (ԲՍԿՇ), և Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին (ԲՍԿՊ) ու «Մոնիտորինգի պլանին» (ՄՊ), Վերաբնակեցման գործողությունների պլանին, եթե առկա է: